ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ Լոռու մարզի Մեծավանի համայնքապետարանի կարիքների համար Մեծավան համայնքի կեցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերման «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

գ. Մեծավան	«05» «ապրիլի» 2019թ. ժ 11:00
Մասնակցում էին՝	
Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Դումիկյան
Հանձնաժողովի անդամներ՝	Մ. Խանաղյան
	Տ. Խաչատրյան
	Ա. Խանաղյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ. Մարկոսյան

1. **«ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցին որոշելու մասին**

/ Ա. Դումիկյան/

1.1 «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «ՇԻՆ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցման մասին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից չի ստացվել տեղեկատվություն և «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված 44-րդ կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Հանձնաժողովը որոշեց

1.2 Հիմք ընդունելով գնահատման թերթիկները հաստատել «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտերի գնահատման արդյունքները և հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակցին.

1-ին չափաբաժնի համար ընտրված մասնակից ճանաչել «ՇԻՆ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից, և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ՇԻՆ» ՍՊԸ-ին:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԾՁԲ-19/01» ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:

2. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին**:
/ Ա. Դումիկյան/

«ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԾՁԲ-19/01» ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծավան, Զ. Անդրանիկի 2, Մեծավանի համայնքապետարանի վարչական շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, **դեմ** 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա. Դումիկյան
Անդամներ՝		Մ. Խանաղյան
		Տ. Խաչատրյան
		Ա. Խանաղյան
Քարտուղար՝		Գ. Մարկոսյան